

Հ Ա Մ Ա Շ Խ Ա Ր Հ Ա Յ Ի Ն  
Մ Ր Ց ՈՒ Ն Ա Կ ՈՒ Թ Յ Ա Ն  
Զ Ե Կ ՈՒ Յ Ց 2006-2007

«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոն  
Մանուկ Հերզնյան

Երեւան, սեպտեմբերի 27, 2006



## Ինչո՞ւ «մրցունակություն»

- Մրցունակությունը դառնում է տնտեսական զարգացման հիմնական գաղափարահենքը:
- Մրցունակությունը երկրի տնտեսական վիճակը բնութագրող ավելի համապարփակ ցուցանիշ է, քան տնտեսական աճի տեմպը:
- Մրցունակությունը ազդում է տնտեսության հնարավորությունների վրա՝ միջնաժամկետ եւ երկարաժամկետ ժամանակահատվածներում տնտեսական աճ գրանցելու համար:

# Մրցունակության համաշխարհային զեկույց

- Մրցունակության վերաբերյալ ամենաընդգրկուն տվյալների շտեմարանը, որտեղ օգտագործվում են «*կոշտ տվյալներ*» (հանրությանը մատչելի վիճակագրական տվյալներ) եւ «*հարցաշարային տվյալներ*» (ընկերությունների ղեկավարների հարցում):
- Դիտարկում է բազում երկրների տնտեսությունների համեմատական առավելությունները եւ թերությունները, ինչպես նաեւ՝ այն գործոնները, որոնք ազդում են մրցունակության եւ տնտեսական աճի վրա:
- Բացառիկ հնարավորություն է ընձեռում՝ առավել խորությամբ դիտարկել յուրաքանչյուր երկրի տնտեսության առանձնահատկությունները:
- Տնտեսությունների բազմաչափ ուսումնասիրություն է:
- Պատրաստվում է աշխարհի առաջատար գիտնականների, ինչպես նաեւ՝ ՄՀԶ-ում ներառված երկրներում Համաշխարհային տնտեսական ֆորումի գործընկեր (հետազոտական) ինստիտուտների հետ համագործակցության շնորհիվ: ՀՏԾ-ի գործընկեր կազմակերպությունը Հայաստանում **«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնն է:**

# Ընկերությունների ղեկավարների հարցում




- Ընկերությունների ղեկավարների հարցումը հնարավորություն է ընձեռում՝ պատկերացում կազմել տարբեր երկրների գործարարների կարծիքների վերաբերյալ: Հարցման արդյունքներն ունեն կարեւորագույն նշանակություն, մասնավորապես՝ այն ոլորտների եւ ցուցանիշների վերաբերյալ, որտեղ չկան վստահելի վիճակագրական տվյալներ (կոշտ տվյալներ):
- Հարցման մասնակիցները իրենց երկրի բիզնես միջավայրը, երկրի տնտեսական վիճակը եւ բազմաթիվ այլ պարամետրեր համեմատում են համաշխարհային ստանդարտների հետ:
- Հարցաշարի հարցերը հիմնականում վերաբերում են տվյալ տնտեսության բիզնես միջավայրին:
- Ամեն երկրում հարցման մասնակիցներին ընտրում են ՀՏՖ-ի գործընկեր ինստիտուտները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտրանքի կառուցվածքը (տոկոսային հարաբերությամբ) պետք է արտացոլի տվյալ երկրի Համախառն ներքին արդյունքի կառուցվածքը՝ ըստ ճյուղային բաշխվածության, ընկերությունների չափերի, բացի այդ, նախընտրելի է, որպեսզի այդ ընկերություններն ունենան որոշակի միջազգային գործունեության փորձ:
- 2006թ. հարցմանը մասնակցել է ավելի քան 12,232 ընկերության ղեկավար:
- Հայաստանում հարցմանը մասնակցել է տարբեր ընկերություններում ղեկավար պաշտոններ զբաղեցնող 95 մարդ:

## Մրցունակության համաշխարհային ինդեքս

- Վերջին 3 տարիների ընթացքում պրոֆեսոր Խավիեր Սալա-ի-Մարտինի հետ համատեղ ջանքերով ներկայացվեց ավելի համապարփակ ինդեքս՝ Մրցունակության համաշխարհային ինդեքսը (ՄՀԻ):
- **Մրցունակության համաշխարհային ինդեքսը փոխարինեց ԱՃԻ մրցունակության ինդեքսին 2006թ:**


# Մրցունակության համաշխարհային ինդեքս

Մրցունակությունը սահմանվում է՝ որպես «ինստիտուտների, քաղաքականությունների եւ այլ գործոնների բազմություն, որը որոշում է երկրի *արտադրողականության մակարդակը*, ինչով էլ, հետեւաբար, պայմանավորված է երկրի տնտեսական բարեկեցության այն մակարդակը, որին կհասնի տվյալ պետությունը առաջիկա 3-5 տարիների ընթացքում» (Համաշխարհային տնտեսական ֆոքում):



«Առավել մրցունակ երկրներն ավելի են հակված ավելի բարձր եկամուտների մակարդակ ստեղծել, ապահովել իրենց քաղաքացիների համար» (Խավիեր Սալա-ի-Մարտին, 2004)

# Մրցունակության համաշխարհային ինդեքս




Ընկերությունների մրցակցությունը հիմնված է գնի վրա՝ պայմանավորված էժան արտադրական գործոններով

Արդյունավետ արտադրության գործընթացը բարձրացնում է արտադրողականությունը

Տնտեսությունները պետք է թողարկեն նորարարական արտադրանք, որը պահանջում է բարդ արտադրական գործընթացներ

Տարբեր տնտեսական զարգացման փուլերում գտնվող տնտեսությունների համար ՄՀԻ-ն հաշվարկելու համար տնտեսական ցուցանիշների նկատմամբ կիրառվում են տարբեր կշիռներ

# Մրցունակության համաշխարհային ինդեքս



# Մրցունակության համաշխարհային ինդեքս

## Մրցունակության 9 հիմնասյուները

### Բազային պայմանների ենթահինդեքս

(Փուլ 1. Ռեսուրսների վրա հիմնված)

1. Ինստիտուտներ
2. Ենթակառուցվածքներ
3. Մակրոտնտեսություն
4. Առողջապահություն, միջնակարգ կրթություն

### Արդյունավետության խթանիչների ենթահինդեքս

(Փուլ 2. Արդյունավետության վրա հիմնված)

5. Բարձրագույն կրթություն եւ որակավորման բարձրացում
6. Շուկաների արդյունավետություն (ապրանքի, աշխատանքի, ֆինանսական)
7. Տեխնոլոգիական պատրաստվածություն

### Նորարարությունների եւ բիզնեսի զարգացածության գործոնների ենթահինդեքս

(Փուլ 3. Նորարարությունների վրա հիմնված)

8. Բիզնեսի գործառնությունների բարդություն
9. Նորարարություններ

# Մրցունակության համաշխարհային ինդեքս

Հիմնասյուներին (ենթահինդեքսներին) տրվող կշիռներ

Փուլ	Բազային պայմաններ	Արդյունավետության խթանիչներ	Նորարարություններ և բարդ արտադրական գործընթացներ
Ռեսուրսների վրա հիմնված փուլ	50%	40%	10%
Արդյունավետության վրա հիմնված փուլ	40%	50%	10%
Նորարարությունների վրա հիմնված փուլ	30%	40%	30%

# Մրցունակության համաշխարհային ինդեքս

## Զարգացման փուլեր

Փուլերի բաժանումը տեղի է ունենում՝ ըստ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի

<b>Փուլ 1</b>	<b>Փուլ 2</b>	<b>Փուլ 3</b>
ՀՆԱ < \$2,000	ՀՆԱ՝ \$3,000-\$9,000	ՀՆԱ > \$17,000
Հայաստան, Հնդկաստան, Վիետնամ	Չիլի, Լեհաստան, Թուրքիա, Ղազախստան	ԱՄՆ, ՄԱԷ, Սինգապուր

Այն երկրները, որոնց մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն փուլերի սահմանային չափերից դուրս է, գտնվում են անցումային փուլերում

**Անցումային փուլ 1-ից՝ 2**  
\$2000-\$3000  
Էլ Սալվադոր, Ալբանիա,  
Թունիս

**Անցումային փուլ 2-ից՝ 3**  
\$9,000-\$17,000  
Բահրեյն, Կորեա, Թայվան,  
Բարբադոս

**Հայաստանը զարգացման առաջին փուլում է գտնվում**

# Մրցունակության համաշխարհային ինդեքս

1-15 երկրներ/ տնտեսություններ	ՄՀԻ 2006–07 տեղ	ՄՀԻ 2006–07 միավոր	ՄՀԻ 2005–06 տեղ
Շվեյցարիա	1	5.81	4
Ֆինլանդիա	2	5.76	2
Շվեդիա	3	5.74	7
Դանիա	4	5.7	3
Սինգապուր	5	5.63	5
Միացյալ Նահանգներ	6	5.61	1
Ճապոնիա	7	5.6	10
Գերմանիա	8	5.58	6
Նիդեռլանդներ	9	5.56	11
Մեծ Բրիտանիա	10	5.54	9
Հոնգ Կոնգ	11	5.46	14
Նորվեգիա	12	5.42	17
Թայվան, Չինաստան	13	5.41	8
Իսլանդիա	14	5.4	16
Իսրայել	15	5.38	23

# Մրցունակության համաշխարհային ինդեքս

Երկիր	ՄՀԻ տեղ 05-06	Միավոր	Փոփ.	ՄՀԻ տեղ 06-07	Միավոր
Թուրքիա	71	3.94	↗	59	4.14
Բոթսվանա	72	3.94	↘	81	3.79
Տիլիպիններ	73	3.93	↗	71	4.00
Վիետնամ	74	3.91	↘	77	3.89
Մակեդոնիա	75	3.84	↘	80	3.86
Մարոկո	76	3.83	↗	70	4.01
Պերու	77	3.83	↗	74	3.94
Գանա	78	3.82	-	-	-
Նամիբիա	79	3.8	↘	84	3.74
Շրի Լանկա	80	3.77	↗	79	3.87
<b>Հայաստան</b>	<b>81</b>	<b>3.75</b>	↘	<b>82</b>	<b>3.75</b>
Ալժիր	82	3.75	↗	76	3.9
Նիգերիա	83	3.74	↘	101	3.45
Վենեսուելա	84	3.71	↘	88	3.69
Սերբիա եւ Մոնտենեգրո	85	3.67	↘	87	3.69
Վրաստան	86	3.61	↗	85	3.73
Էկվադոր	87	3.59	↘	90	3.67
Բոսնիա եւ Հերցեգովինա	88	3.58	↘	89	3.67
Մոլդովա	89	3.58	↗	86	3.71
Մոնղոլիա	90	3.57	↘	92	3.6
Դոմինիկյան Հանր.	91	3.56	↗	83	3.75

# Մրցունակության համաշխարհային ինդեքս

ԱՊՀ երկրներ	ՄՀԻ 2006–07 տեղ	ՄՀԻ 2006–07 միավոր	ՄՀԻ 2005–06 տեղ
Ղազախստան	56	4.19	51
Ռուսաստան	62	4.08	53
Ադրբեջան	64	4.06	62
Ուկրաինա	78	3.89	68
<b>Հայաստան</b>	<b>82</b>	<b>3.75</b>	<b>81</b>
Վրաստան	85	3.73	86
Մոլդովա	86	3.71	89
Տաջիկստան	96	3.5	92
Ղրղզստան	107	3.31	104

# Մրցունակության համաշխարհային ինդեքս

ԱՊՀ երկրներ	Երեք ենթահինդեքսներ							
	Ընդհանուր ինդեքս		Բազային պահանջներ		Արդյունավետության իրթանիչներ		Նորարարության գործոններ	
Երկիր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Ղազախստան	56	4.19	51	4.64	56	3.97	74	3.51
Ռուսաստան	62	4.08	66	4.43	60	3.91	71	3.55
Ադրբեջան	64	4.06	56	4.59	78	3.52	70	3.59
Ուկրաինա	78	3.89	86	4.15	69	3.68	78	3.47
<b>Հայաստան</b>	<b>82</b>	<b>3.75</b>	<b>81</b>	<b>4.21</b>	<b>88</b>	<b>3.33</b>	<b>93</b>	<b>3.17</b>
Վրաստան	85	3.73	82	4.2	87	3.36	113	2.86
Մոլդովա	86	3.71	88	4.09	85	3.38	98	3.09
Տաջիկստան	96	3.5	94	3.94	103	3.07	103	3.02
Դրղստան	107	3.31	109	3.56	102	3.08	108	2.93

# Մրցունակության համաշխարհային ինդեքս՝ Բազային պահանջներ

ԱՊՀ երկրներ	Բազային պահանջներ		1. Ինստիտուտներ		2. Ենթակառուցվածք		3. Մակրոտնտեսություն		4. Առողջապահություն եւ միջնակարգ կրթություն	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Ղազախստան	51	4.64	75	3.59	68	3.33	10	5.57	86	6.08
Ադրբեջան	56	4.59	72	3.63	56	3.67	17	5.3	96	5.76
Ռուսաստան	66	4.43	114	2.97	61	3.52	33	4.95	77	6.29
<b>Հայաստան</b>	<b>81</b>	<b>4.21</b>	<b>84</b>	<b>3.44</b>	<b>92</b>	<b>2.66</b>	<b>71</b>	<b>4.33</b>	<b>62</b>	<b>6.4</b>
Վրաստան	82	4.2	78	3.51	79	2.87	93	4.02	61	6.4
Ուկրաինա	86	4.15	104	3.14	69	3.3	74	4.27	94	5.88
Մոլդովա	88	4.09	101	3.18	85	2.77	67	4.41	92	6.01
Տիջիկստան	94	3.94	77	3.53	108	2.2	96	3.94	85	6.09
Ղրղզստան	109	3.56	123	2.66	103	2.3	117	3.27	91	6.02

# Մրցունակության համաշխարհային ինդեքս՝ Արդյունավետության խթանիչներ

ԱՊՀ երկրներ	Արդյունավետության խթանիչներ		5. Բարձրագույն կրթություն եւ վերապատրաստում		6. Շուկայի արդյունավետություն		7. Տեխնոլոգիական պատրաստվածություն	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Ղազախստան	56	3.97	51	4.28	44	4.39	66	3.23
Ռուսաստան	60	3.91	43	4.44	60	4.2	74	3.1
Ուկրաինա	69	3.68	48	4.35	80	3.96	90	2.71
Ադրբեջան	78	3.52	82	3.56	81	3.96	76	3.03
Մոլդովա	85	3.38	73	3.78	92	3.73	96	2.62
Վրաստան	87	3.36	76	3.69	86	3.86	106	2.54
<b>Հայաստան</b>	<b>88</b>	<b>3.33</b>	<b>80</b>	<b>3.58</b>	<b>104</b>	<b>3.6</b>	<b>86</b>	<b>2.81</b>
Ղրղզստան	102	3.08	79	3.6	114	3.48	122	2.16
Տաջիկստան	103	3.07	98	3.09	108	3.56	102	2.57


# Մրցունակության համաշխարհային ինդեքս՝ Նորարարության գործոններ

ԱՊՀ երկրներ	Նորարարության գործոններ		8. Բիզնեսի զարգացման մակարդակ		9. Նորարարություն	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Ադրբեջան	70	3.59	70	3.92	63	3.26
Ռուսաստան	71	3.55	77	3.83	59	3.28
Ղազախստան	74	3.51	72	3.9	70	3.13
Ուկրաինա	78	3.47	76	3.84	73	3.11
<b>Հայաստան</b>	<b>93</b>	<b>3.17</b>	<b>104</b>	<b>3.34</b>	<b>84</b>	<b>3</b>
Մոլդովա	98	3.09	93	3.46	100	2.72
Տաջիկստան	103	3.02	110	3.19	95	2.85
Ղրղզստան	108	2.93	105	3.31	111	2.55
Վրաստան	113	2.86	116	3.02	102	2.71


# Մրցունակության համաշխարհային ինդեքս

Հայաստան	2006	Միավոր	2005	Միավոր
<b>Տեղ` ըստ ՄՀԻ-ի</b>	<b>82</b>	<b>3.75</b>	<b>81</b>	<b>3.75</b>
<b>Բազային պահանջների ենթահինդեքս</b>	<b>81</b>	<b>4.21</b>	<b>80</b>	<b>4.20</b>
Ինստիտուտներ	84	3.44	77	3.4
Ենթակառուցվածք	92	2.66	95	2.57
Մակրոտնտեսություն	71	4.33	70	4.31
Առողջապահություն եւ միջնակարգ կրթություն	62	6.4	75	6.52
<b>Արդյունավետության խթանիչների ենթահինդեքս</b>	<b>88</b>	<b>3.33</b>	<b>82</b>	<b>3.29</b>
Բարձրագույն կրթություն եւ վերապատրաստում	80	3.58	67	3.8
Շուկայի արդյունավետություն	104	3.6	93	3.52
Տեխնոլոգիական պատրաստվածություն	86	2.81	91	2.56
<b>Նորարարության գործոնների ենթահինդեքս</b>	<b>93</b>	<b>3.17</b>	<b>80</b>	<b>3.35</b>
Բիզնեսի զարգացման մակարդակ	104	3.34	81	3.69
Նորարարություն	84	3.0	73	3.01

# Մրցունակության համաշխարհային ինդեքս՝ Հայաստան



# Բիզնեսի համար ամենախնդրահարույց գործոնները Հայաստանում



Ծանոթություն. 14 գործոնների ցանկից՝ հարցվողները պետք է ընտրեին բիզնեսի համար 5 առավել խնդրահարույց գործոնները Հայաստանում եւ այնուհետեւ պետք է դասակարգեին դրանք 1-ից 5 սանդղակով: Գծապատկերի այլոնները ցույց են տալիս այդ գործոնների կշռված արժեքները՝ ըստ հարցվողների համապատասխան դասակարգման:


# Հիմնական եզրահանգումներ. ՄՀԻ

- Հայաստանի վարկանիշները չեն կրել էական փոփոխություն նախորդ տարվա համեմատությամբ: Չնայած նրան, որ Հայաստանի վարկանիշը 81-ից իջել է 82-րդ տեղ, այն իրականում բարձրացել է երկրների առաջին 69-տոկոսային միջակայքից՝ 65-տոկոսային միջակայք, քանի որ ավելացել են 8 նոր երկրներ:
- Հայաստանի արդյունքները համատեղելի են զարգացող երկրների միտումների հետ՝ փոքր-ինչ առաջ անցնելով առողջության եւ նախնական կրթության բնագավառներում:
- Հայաստանի մրցունակությունը մնում է շատ ցածր մակարդակի վրա, ինչը կլիտչընդոտի երկրի կարողությանը՝ ապահովել բարձր տնտեսական աճ միջնաժամկետ եւ երկարաժամկետ հեռանկարում:
- Հիմնական խնդիրները առկա են շուկաների արդյունավետության եւ երկրի տեխնոլոգիական պատրաստվածության բնագավառներում: Շուկայի արդյունավետության վարկանիշները արտացոլում են ապրանքների շուկաներում հակամրցակցային գործելաոճը, մի քանի բիզնես խմբերի կողմից կարելորագույն տեղական շուկաների վերահսկողությունը, ինչպես նաեւ՝ ֆինանսական շուկաների զարգացման ծայրահեղորեն ցածր մակարդակը:

# Հիմնական եզրահանգումներ. ՄՀԻ

- Ամենատազնապահարույց ցուցանիշներից մեկը բիզնեսի զարգացման մակարդակի շատ ցածր վարկանիշներն են:
- Ցածր վարկանիշները մասնավորապես արտացոլում են տնտեսական աճի բնույթը, որը տեղի է ունենում հիմնականում շինարարության եւ գյուղատնտեսության հաշվին: Այս ճյուղերը մեծապես կողմնորոշված են դեպի տեղական շուկան, թույլ են առնչվում միջազգային շուկաների հետ եւ չեն հանգեցնում նոր, բարձրակարգ բիզնես ունակությունների ներկրմանը երկիր:
- Հայկական ընկերությունների թույլ նորարական գործունեությունը էականորեն խոչընդոտում է միջազգային շուկաներում առավել գրավիչ մրցակցային դիրքերի գրավմանը եւ ավելի բարձրարժեք սեգմենտներում հաջողությամբ մրցելուն:

# Բիզնեսի մրցունակության ինդեքս



- Ֆիզիկական ենթակառուցվածքներ
- Մարդկային ռեսուրսներ
- Ֆինանսական շուկաներ
- Քլաստերների զարգացածություն
- Մրցակցություն

- Արտադրական գործընթացների բարդությունը
- Ընկերության կողմից հետազոտությունների վրա կատարվող ծախսերը
- Արդյունքի ստեղծման արժեքային շղթայի առկայությունը
- Պրոֆեսիոնալ կառավարման առկայությունը
- Հաճախորդներին սպասարկելու ուղղվածությունը

# Բիզնես մրցունակության ինդեքս

Առաջատար 20 երկրները	ԲՄՀ դասակարգում	Ազգային բիզնես միջավայրի որակի դասակարգում	Ընկերությունների գործունեության եռազմավարության դասակարգում
ԱՄՆ	1	1	1
Գերմանիա	2	2	2
Ֆինլանդիա	3	3	8
Շվեյցարիա	4	4	4
Դանիա	5	6	6
Հոլանդիա	6	5	7
Շվեդիա	7	8	3
Մեծ Բրիտանիա	8	7	9
Ճապոնիա	9	9	5
Հնդգ-Կոնգ	10	10	12
Սինգապուր	11	11	21
Ավստրիա	12	14	10
Իսլանդիա	13	12	19
Նորվեգիա	14	13	20
Կանադա	15	16	18
Ֆրանսիա	16	18	11
Բելգիա	17	17	13
Ավստրալիա	18	15	23
Իսրայել	19	19	15
Մալազիա	20	20	14

# Բիզնես մրցունակության ինդեքս

ԱՊՀ երկրներ	ԲՄՀ դասակարգում		Ազգային բիզնես միջավայրի որակի դասակարգում		Ընկերությունների գործունեության եւ ռազմավարության դասակարգում		Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (գնողականության պարիտետով հաշվարկված)
	2006	2005	2006	2005	2006	2005	2005
Ղազախստան	70	64	70	62	74	73	8,318
<i>Ադրբեջան</i>	77	72	78	73	66	67	4,601
Ռուսաստանի Դաշնություն	79	70	77	67	78	78	11,041
Ուկրաինա	81	68	80	69	82	71	7,156
Մոլդովա	90	88	91	89	91	89	2,374
<b>Հայաստան</b>	<b>94</b>	<b>87</b>	<b>93</b>	<b>88</b>	<b>101</b>	<b>86</b>	<b>4,270</b>
<i>Տաշիկստան</i>	98	100	97	98	108	108	1,388
Վրաստան	100	90	101	90	97	91	3,616
Դրոզդաստան	112	105	112	107	114	90	2,088

Ծանոթություն. շեղատառերով նշված երկրները տվյալների կայունության թեսթի պահանջներին չեն բավարարել: Դրանց տվյալները պետք է մեկնաբանվեն վերապահումով:

# Հիմնական եզրահանգումներ. ԲՄԻ

- Գործարար մրցունակության առումով Հայաստանի դիրքն արտացոլում է այլ (համանման) երկրների համեմատությամբ Հայաստանում միկրոտնտեսական միջավայրի ավելի դանդաղ ցարգացմամբ :
- Մրցունակությունը նշանակում է հաղթական ռազմավարություններ եւ գործառնական արդյունավետություն, որը կախված է մասնավորապես շուկայավարման գործիքների օգտագործումից, հաճախորդներին խորությամբ ճանաչելու հանգամանքից, գիտահետազոտական ու փորձարարական նախագծման (R&D) վրա կատարվող ծախսերից, ինչպես նաեւ՝ աշխատողների վերապատրաստման գործընթացներից:
- Ազգային գործարար միջավայրի հիմնական թուլություններն են. վարչական թույլ ենթակառույցները, ֆինանսական շուկաների զարգացածության խիստ ցածր մակարդակը, տեղական մրցակցության խաթարված լինելը, ճյուղային ուժեղ քլաստերների բացակայությունը, որն արտացոլում է տվյալ ճյուղի ընկերությունների, կառավարության, գիտական եւ օժանդակ հաստատությունների միջեւ թույլ համագործակցությունը:

# Հիմնական եզրահանգումներ

- Ազգային մրցունակության տեսակետից դանդաղ առաջընթացը նշանակում է ձախողում:
- Ցածր մրցունակության վնասակար հետեւանքներն իրենց զգացնել կտան 3-4 տարիների ընթացքում:
- Հայաստանը կարող է շատ կարճ ժամկետում առաջ անցնել եւ զգալիորեն բարելավել իր մրցակցային դիրքը, եթե կարողանա մշակել ու հաստատակամորեն իրականացնել գործուն փոփոխությունների ծրագիր:
- Չնայած այն բանին, որ կառավարությունը պետք է առաջնորդություն ստանձնի, մասնավոր հատվածն իր հերթին պետք է ճիշտ ընկալի, գիտակցի եւ իրականացնի փոփոխությունը:
- Առաջնորդությունն իր հորիզոնով պետք է ավելի հեռահար լինի, քան ներկա քաղաքական պարբերաշրջանը:

# Հիմնական եզրահանգումներ

Հաստատությունները, մակրոտնտեսական միջավայրը, առաջնային կրթությունն եւ առողջապահությունը, ենթակառուցյցները համարվում են Հայաստանի զարգացման ներկա փուլի համար հիմնարար շարժիչ ուժեր:

Շարժիչ ուժ՝ կառավարություն



Զարգացման հաջորդ փուլին անցնելու համար Հայաստանը պետք է կենտրոնանա արդյունավետ շուկաներ ստեղծելու, մրցակցությունը խաթարող գործելակերպերի վերացման, եռանդուն կերպով ֆինանսական շուկաները զարգացնելու վրա, ինչպես նաեւ՝ այնպիսի ոլորտներում զգալի ներդրումներ կատարելու վրա, ինչպիսիք են բարձրագույն կրթությունը, մասնագիտական վերապատրաստումը եւ ժամանակակից տեխնոլոգիաները:

Շարժիչ ուժ՝ կառավար-ն-մասնավոր հատված համագործակ-ն

- Արդյունավետ կառավարություն
- Հակամենաշնորհային արդյունավետ քաղաքականություն
- Ֆինանսական շուկաների զարգացում
- Ընկերություններում կառավարման եւ որոշումների կայացման գործընթացի որակի բարձրացում
- Հեռահաղորդակցության եւ կապի տեխնոլոգիաների զարգացում



Մրցունակ ազգ դառնալը մեծապես կախված է լինելու կառավարման խիստ զարգացած գործիքների ընդունումից ու կիրառումից եւ նորարարության ոլորտում ընկերությունների կարողություններից:

Շարժիչ ուժը՝ մասնավոր հատված

- Արժեքի ստեղծման ամբողջական շղթաների ստեղծում
- Շուկայավարման գործիքների օգտագործում – վարկանվան ստեղծում եւ առաջնորում
- Մտավոր սեփականության պաշտպանություն
- Պատշաճ SS ենթակառուցյցների տրամադրման հարցում կառավարության դերը
- Գործարարության մեջ պրոֆեսիոնալ կառավարիչների ընդգրկում

Հայաստանի մրցունակության  
բարձրացման հարցը դառնում է  
ազգային անվտանգության հարց:

# Հայաստանի մրցունակության զեկույց

- «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը պատրաստում է Հայաստանի Ազգային մրցունակության զեկույցը, որը նպատակ ունի`
  - համապարփակ գնահատել Հայաստանի տնտեսական մրցունակությունը,
  - բացահայտել հիմնական մարտահրավերները,
  - հատկորոշել դրանց միջնաժամկետ եւ երկարաժամկետ ազդեցությունները երկրի տնտեսական զարգացման վրա,
  - լուսաբանել կարելի լծակները, որոնք կօգնեն Հայաստանի մրցակցային դիրքի բարելավմանը:
- Կենտրոնը համագործակցելու է կառավարության եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ` Զեկույցում ամենահրատապ հարցերը ներառելու նպատակով:
- Զեկույցը նախատեսված է տպագրել 2007թ. ապրիլին:

Այս ներկայացման էլեկտրոնային  
տարբերակը կտեղադրվի

[www.ev.am](http://www.ev.am)

կայքէջում